

Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի հունվարի 15-ի N 46-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին

Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

<< >> 2017 թվականի N -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2004 ԹՎԱԿԱՆԻ

ՀՈՒՆՎԱՐԻ 15-Ի N 46-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի
Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի
Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի
հունվարի 15-ի <<Չինժառայողների հիվանդությունների,
վնասվածքների և խեղումների պատճառը զինժառայության հետ
կապելու կարգը հաստատելու մասին>> N 46-Ն որոշման 1-ին կետով
հաստատված հավելվածի 4-րդ կետում լրացնել <<զ>> ենթակետ՝
հետևյալ բովանդակությամբ.

<<զ) հիվանդությունը ձեռք է բերել, վնասվածքը կամ խեղումն ստացել է
հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահության կամ հատուկ
առաջադրանք կատարելու ժամանակ:>>:

2. Սույն որոշումն ուժի է մեջ մտնում պաշտոնական հրապարակմանը
հաջորդող օրվանից:

